

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2020Թ.-ԻՆ ԿԱՏԱՐԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առողջապահություն

Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար 2020 թվականի հատկացվել է 777,4 մլն. դրամ գումար:

Իրականացվել է 87470,7մլն. դրամի վճարովի ծառայություններ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 8 մլն 182.5 հազ. դրամով:

2020 թ. ընթացքում բժշկական կազմակերպություններում հաշվառվել են 273 ծնունդ, որից 8-ը ԱՀ-ից, 2019թ.-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 42-ով:

2020թ.-ի ընթացքում պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 66 տեղից ուղեգրող հանձնաժողովների կողմից հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 34 քաղաքացի, առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 4 երեխա իրենց խնամակալների հետ:

Մարտի 16-ից դեկտեմբերի 22-ն ընկած ժամանակահատվածի տվյալներով հաստատվել է նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության (COVID 19) 1859 դեպք:

Փաստացի բուժում է ստանում 760 քաղաքացի:

Առողջացած անձանց թիվը՝ 1068:

Մահվան դեպքերի ընդհանուր թիվը՝ 31:

Մարտի 16-ից դեկտեմբերի 22-ն ընկած ժամանակահատվածում կատարվել է 4617 նմուշառում:

Բժշկական կազմակերպություններում աշխատում են 415 բուժաշխատող:

Սյունիք բարեգործական հիմնադրամի հետ կիսակազմակերպվել է մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին ստոմատոլոգիական ծառայությունների մատուցում՝ սպասարկվել է մոտ 60 քաղաքացի:

Կազմակերպվել է 100-ից ավելի միջին բուժաշխատողների վերապատրաստում Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի հետ համատեղ:

Առողջապահության Ազգային Ինստիտուտի հետ համատեղ կազմակերպվել են բազմաթիվ վեբինարներ, հեռուստակոնֆերանսներ տարբեր կարգի բուժաշխատողների համար Covid-19-ի ախտորոշման, բուժման, վարման, կանխարգելման հետ կապված:

Կազմակերպվել է ՀՀ ԱՆ փոխնախարարի և ՀՎԿԱԿ ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալի հանդիպումը մարզի բուժօգնականների տնօրենների հետ, որտեղ քննարկվել է Covid-19-ի ժամանակ պատվաստումների իրականացման գործընթացը:

Կազմակերպվել է կենտրոնացված և մարդասիրական ճանապարհներով ստացվող դեղորայքի ստացում և կատարվել է բաշխումներ մարզի բուժօգնականներին:

Համագործակցել ենք ՀՕՖ-ի առողջապահական բաժնի հետ:

Աշխատել ենք ենթակա և վերադաս կազմակերպությունների, ՀՎԿԱԿ-ի մարզային մասնաճյուղի հետ :

Կատարվել է այցեր մարզի բոլոր ԲՄԿ-ներ:

Ուսումնասիրվել են քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները, բարձրացված խնդիրներին տրվել են լուծումներ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի

առողջապահության և սոցիալական ապահովության

վարչության պետ

Վ.Ասլանյան

08.01.2020թ.